

մալում» տպելու մի երկար լատարարութիւն Բաղմա-վէպի և Գեղունու մասին: Հետաքրքիր է, ինչ պարտա-կան ենք մենք տպել Ձեր Գեղունու 4 երես լատարա-րութիւնը, երբ մենք չենք էլ տեսել թէ ինչ գոյն ու-նի Ձեր Գեղունին: Եւ բացի սորանից ինքներդ մեր լա-տարարութիւնը չտպած՝ ձերն էք ուղարկում: Այսպիսի հանդամանքներում փոխանակութիւնը անկարելի է թւում մեզ:

Ինչ վերաբերում է «Բաղմալէպ»-ի տարւոյս լու-նուար գրքի մէջ «Լումալ»-ի և նորա խմբագրի մասին արած կեղտոտ և մութ ակնարկներին, հրաւիրում ենք կաթոլիկ թերթի խմբագրութեան պարզ ասել, թէ ինչ է ուղում հասկացնել լեղափոխական» և «մատնիչ» բա-ռերով. որովհետեւ մեզ անհասկանալի են մի ոմն Երեմ.-ի լեղկատակութիւնները և մենք երբէք չենք էլ երազել մի որ և է կրօնական լեռադէմ միաբանութիւն և նոցա բերան թերթը համարել լեղափոխական, Յոյց առէք թէ «Լումալ»-ի ձր համարումն ենք ձեզ լեղափոխական ա-նուանել,—Մենք կարիք չունինք ձեր թերթը սպաննե-լու վերաջ մտածել, վասնզի թերթը իւր արդի ուղղու-թեամբ ինքն իրեն կսպանուի:

ՄՏԵՑՈՒՄԻ ԳՐՔԵՐ

Մ. Գօրկիյ, Ամալի դաշտում. Թարգմ. Ս. Մ. Իսահակեան.
Ալէքս. 1902

Պրօֆ. Ն. Սուվորով. Եկեղեցու և պետութեան լարաբերութիւն-ները. ռուս. Թարգմ. Պետրոս Տէր Բարութիւնեան. խմբ.
Ս. Տիգրանեանի, Վաղարշապատ 1902.

Юрїя Веселовскій. Армянскій повѣтъ Смбатъ Шах-Азизъ
Москва 1902

Դրախտի ընտանիք. գրեց Խրիմեան Հալրիկ, հինգերորդ տպ.
Թիֆլիս 1902.

Շահրիար. Զնուդ Քուշան. վէպ Պարսկաստանի կեանքից. Թիֆ-լիս 1902.

Էմմ. քահ. Նաղարեանց. Ոտանաւորներ երեխաների համար
15 պատկ. Մոսկուա 1903

Օրացոյց 1903 ամի. Վաղարշապատ.

Տիգրան Նաւասարդեանց. Հալ ժողովրդական հէքիաթներ. Թ.
գիրք. Թիֆլիս 1902.

Լիտտոն. Պոմպէլի վերջին օրերը. թարգմ. անգլ. Ա. Մերզո-
լեան. հրատ. Գ. Գալստեան Թիֆլիս 1902.

Մակար եպս. Բարխուդարեանց. Պատմութիւն Աղուանից. ա.
հ. վաղարշապատ 1902.

Lehrbuch der Neuostarmenischen litteratursprache. Unter Mit-
wirkung von Stephan Kanajeanz. Vagarschapat und Mar-
burg 1902.

Եղ. Վ. Մեծատունեանց. Կոյր առաջնորդ. Մոսկուա 1897.

Թլուստ Դաւիթ. Ժողովրդական վէպ. գրի առաւ Ա. Արե-
ղեան. Թիֆլիս 1902.

Խմբագիր-հրատարակիչ ԳԻՒՅ Ա. ԴԱԷ. ԱՂԱՆԵԱՆՑ
